ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՏԱՏՅԱՆԱ ՍԱՄՈՎԻ ԼՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՅԿԱԶ ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն——————————————————————————3

Գլուխ 1 Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը——————————7

1. 1 Կազմակերպչական ծնողական ժողովների նպատակն ու խնդիրները————7
1. 2 Համադպրոցական ծնողական ժողովների նպատակն ու ծնդիրները——————8
1. 3 Դասարանական ծնողական ժողովների նպատակն ու խնդիրները——————8
1. 4 Թեմատիկ ծնողական ժողովների նպատակն ու խնդիրները——————————10

Գլուխ 2 Ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցությունը ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ——————————12

Եզրակացություն ——————————————————————14

Օգտագործված գրականության ցանկ——————————————————16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ծնողների առաջին խնդիրը երեխաներին սովորեցնելն է, թե ինչպես վարվել բարեկիրթ հասարակության մեջ, երկրորդը՝ գտնել այդ պարկեշտ հասարակությունը>>:

Ռոբերտ Օրբեն

<<Երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և առաջին հերթին՝ ծնողները>>:

Ա.Ս. Մակարենկո

Դաստիարակության հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավել ի շատ տեղեկատվություն ունի, շուտ է զարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք:

Մի բան պարզ է, որ երեխային պետք է դաստիարակել մանկուց, այլապես ուշ կլինի: Ինչպես մեր մեծերն էին ասում,երեխային բարուրի մեջ պետք է դաստիա րակել», այսինքն՝ ծնված օրվանից: Երեխայի ճիշտ դաստիարակության համար շատ մեծ նշանակություն ունի շրջապատը, սակայն ամեն դեպքում երեխան ն ախ դաստիարակվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում: Ծնողները՝ հայրն ու մ այրը, պետք է լրջորեն զբաղվեն երեխայի դաստիարակությամբ:

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին: Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:

Շրջապատի մարդիկ այսպես թե այնպես ազդում են մարդու մտքերի և արարքն երի, նրա աշխարհընկալման և իր վրա՝ անկախ նրանից նա դա ուզում է, թե ոչ:

Եվ իհարկե, շատ մեծ է այդ ազդեցությունը երեխաների վրա: Երեխաները սպունգի նման ներծծում են այն ամենը, ինչ կատարվում է նրանց շուրջը: Նրանք մեծ հաճույքով կրկնում են իրենց շրջապատող մարդկանց և ծնողների խոսքերը, միմիկան, ժեստերը, վարքի ձևերը: Կարևոր է, որ ծնողները գիտակցեն, որ հատկապես իրենցից է կախված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան: Կլինի նա երջանիկ և վստահ իր ուժերին, թե կլինի կոմպլեքսներով, չարացած աշխարհի վրա՝ չիմանալով իրեն ինչպես դրսևորի՝ չունենալով որոշակի գիտելիք, հմտություն և պաշար: Երեխաների դաստիարակության ընթացքում կարելի է և հարկավոր է համաձայնեցնել այն բնավորության գծերը և երեխաների պահվածքը, որոնք հակասում են ծնողի սկզբունքներին: Շատ ծնողներ հատկապես առաջին երեխայի ժամանակ հիմն ականում շատ անվստահ են լինում՝ վախենալով սխալ դաստիարակել իրենց ե րեխային, որի արդյունքում անվճռականություն են ցուցաբերում, և ի հայտ են գ ալիս մի շարք բացթողումներ, և երբ երեխան արդեն սկսում է զգալ ծնողի անվս տահությունը դաստիարակության գործում, սկսում է մանիպուլյացիայի ենթար կել սեփական ծնողին, որն էլ, բնականաբար, հիմք է ստեղծում համապատասխ ան բացասական վարքագծի ձևավորմանը:

Երեխաների դաստիարակության ժամանակ առաջին հերթին հարկավոր է առաջացնել երեխայի մոտ անհատականություն: Բայց չի կարելի մոռանալ համընդանուր արժեքները – վարքի կանոններ, բարոյականություն և կոլեկտիվի և հասարակություն վրա ներգործելու բարեխիղճ մեթոդներ, որոնք ապագայում կօգնեն լինել ինքնուրույն և կարողանալ գործել որոշակի կերպով:

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորությունների, մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում: Ընտանեական դաստիարակությունը շարունակական է, որի դերի բարձրացումը ավելի շատ կախված է դպրոցից: Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է թե՛ դպրոցում, և թե՛ ընտանիքում: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր,ապա հաղթանակն ապահովված է:

Ժամանակակից հոգեբանության մեջ այսօր դասակարգում են ծնողական դաս տիարակության 3 հիմնական խմբեր՝

1.ավտորիտար

2. հանդուրժողական

3. ավտորիտատիվ

1.Այն ծնողները, որոնք հակված են ավտորիտար դաստիարակչական մեթոդին, սովորաբար ջղային են, դժգոհ, իշխող, կոպիտ, սահմանափակ են արտահայտ ում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովա

սանքի խոսքեր ասելը լրացուցիչ ճոխություն է և անընդունելի: Նման հարաբեր ություններում ծնողը միշտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի : Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սով որաբար լինում են ըմբոստ, վախկոտ, ջղային, դժբախտ և հեշտությամբ են հաս ակակիցների ազդեցության տակ ընկնում: Նման դաստիարակության արդյուն քում տուժում են երեխա-
ծնող հարաբերությունները, անխուսափելի են վեճերը:
2.Դաստիարակչական երկրորդ ոճը հանդուրժողականն է: Նման ծնողները ջեր մ են և հուզական, բայց շատ սահմանափակ հսկողությամբ, քիչ են մասնակցու մ երեխայի կյանքին և հեշտությամբ տեղի տալիս երեխայի քմահաճույքներին: Այս ծնողը առավել շահագրգռված է, որ երեխայի հետ չհակադրվի և չվիճաբան ի: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, կարծու մ են, թե ծնողները չեն մտածում
իրենց մասին, թելադրում են ծնողներին իրենց կամքը և թերահավատությամբ ե ն վերաբերվում նրանց:
<<Ժամանակակից>> ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այս երևույթին, երբ մայրը, կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որև է կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում է ինքնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալակ ան վարք:
3.Երրորդ ոճը ավտորիտատիվն է: Նման ծնողները լինում են ջերմ, հանգիստ, չ ափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում են նրա հետ
և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են դրական ծնող-
երեխա հարաբերություններ ստեղծելուն, նրանց հարաբերություններում իշխո ւմ է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լ ինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ ե ն, անկեղծ:
Հետազոտական աշխատանքիս նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության, զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա,ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և

սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման, դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

- ✓ **Գտնել ընտանիքի մեջ այն հնարավորությունները,որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա:**
- ✓ **Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան:**
- ✓ **Ներգրավել ծնողներին ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին:**

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ:Հետազոտական աշխատանքիս խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ են ծնողները ստանձնում միայն դիտորդի դերը: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը: Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցները դպրոցն ու ընտանիքն են:

Վարքով ու հատկապես կարգապահությամբ է պայմանավորված սոցիալական միջավայրում իր տեղն ու դերը գտնելու, վերջիններս արդյունավետորեն արժևորելու փաստը: Այդ հարցում անփոխարինելի է կրթօջախների դերը: Ուստի սովորողին ուսումնասիրելիս ուսուցիչներն ուշադրություն են դարձնում դասարանում <<փոքրիկ հասարակության>> մեջ դրսևորած վարքին ու կարգապահությանը:

Հենց այս հարցերում է, որ պետք է պահպանել ուսուցիչ-ծնող սերտ կապը, որպեսզի սովորողը հասնի ուսումնական առաջադիմության առավելագույնին: Այժմ մանրամասն ուսումնասիրենք ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցության և կապի մի քանի ձևեր: Դրանցից են

- **Ծնողական ժողովներ**
- **Հեռախոսակապ**
- **Էլեկտրոնային հաղորդակցություն**

Հետազոտական աշխատանքս կատարել եմ սեփական դիտարկումների հիման վրա և վերլուծության մեթոդով:

Գլուխ 1: ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձև է: Ծնողական ժողովները կարող են լինել

- Կազմակերպչական
- Համադպրոցական
- Դասարանական
- Թեմատիկ

Կազմակերպչական ծնողական ժողովների նպատակն է հաշվի առնելով ծնողների կարծիքներն ու տալով նրանց ընտրության հնարավորություն, համատեղ լուծել դասարանում մի շարք կազմակերպչական խնդիրներ: Այդպիսի խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի: Օրինակ՝ դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների, արշավների, զբոսանք բնության գրկում, դասարանական ցերեկույթների կազմակերպում, դասասենյակի , միջանցքի, կամ որևէ վահանակի ձևավորում և այլն: Երբ քննարկումներն ավարտվում են և աշխատանքները բաժանվում, սկսվում են կազմակերպչական աշխատանքները: Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող-ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ:Իրենց հերթին սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին: Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում՝ առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին:

Համադպրոցական ծնողական ժողովների նպատակները և խնդիրները. Այս ժողովների ժամանակ հրավիրվում են դպրոցի բոլոր սովորողների ծնողները և քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում են բոլորին և ունեն համադպրոցական նշանակություն /հաշվետվություններ, դասգրքերի վարձավճարներ, համազգեստներ և այլն/: Այստեղ առավել կարևոր է շեշտը դնել համադպրոցական հարցերի քննարկման, արտադասարանական աշխատանքների մեջ ծնողների ներգրավվածության վրա՝ հաշվի առնելով նրանց կարծիքն ու նրանց տալով ընտրության հնարավորություն /էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, միջանցքի կամ դահլիճի ձևավորում և այլն/:Որքան ծնողը շատ ժամանակ անցկացնի դպրոցում, այնքան սովորողը ծնողին անընդհատ դպրոցում տեսնելով՝ իրեն ավելի ոգևորված ու արժևորված կզգա:

Դասարանական ժողովների նպատակները և խնդիրները. Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն և լսեն միմյանց երրորդ կողմի՝ սովորողների խնդիրները: Ծնողական ժողովները կազմակերպվում են դասղեկների կողմից և հիմնականում դասարանում սովորողների առաջադիմությունը քննարկելու և ամփոփելու նպատակով: Որոշ ծնողներ ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը, խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին, ինչը որ ինքնին շատ սխալ մոտեցում է: Երբեմն այդպիսի ծնողական ժողովները վերածվում են <<լավ>> և <<վատ>> գնահատականներ ունեցող սովորողներին գովելու կամ նախատելու գործընթացի, որն էլ իր հերթին շատ հաճախ ավարտվում է ծնողների դժգոհությամբ: Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ ներքոհիշյալ սխալները.

♣ Համեմատել մի սովորողին մյուսի հետ:

♣ Բացասական գնահատական տալ ողջ դասարանին:

♣ Գերագնահատել որևէ առարկայի կարևորությունը:

♣ Նախատել որևէ ծնողի բոլորի ներկայությամբ:

Լուրջ խնդիր է զարգացնել թե՛ ծնողի, թե՛ ուսուցչի ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը սովորողների նկատմամբ և որ ամենակարևոր ու պարտադիր պայմաններից մեկն է՝ կարողանան լավ ճանաչել իրենց երեխաներին: Ծնողներն ու ուսուցիչները նույն սովորողների դաստիարակներն են և ունեն ընդհանուր նպատակներ: Հետևաբար, որպեսզի սովորողի կրթության կազմակերպումն ու առօրյան լինեն լիարժեք,իսկ

դաստիարակությունն՝ առավել արդյունավետ, անհրաժեշտ պայման է ծնող-ուսուցիչ սերտ կապը և փոխադարձ համագործակցությունը: Դպրոցը սովորողին տալիս է գիտելիքներ և իրականության նկատմաբ դաստիարակում գիտակացական վերաբերմունք: Իսկ ընտանիքը ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Սովորողի ներդաշնակ զարգացման համար վերոնշյալ որակները խիստ անհրաժեշտ են: Ընտանիքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից սովորողները միայն շահում են: Սովորողի դաստիարակության գործընթացում համար մեկ ազդեցիկ ուժը՝ սեփական օրինակն է, թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի: Կրթության կազմակերպման հարցում ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար առաջարկում եմ թույլ տալ, որ ծնողները մասնակից դառնան դասավանդմանը՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները և նախօրոք ծանոթանալով սովորողի ուսումնական նյութին: Իրենց ծնողներին տեսնելով ներգրավված և համագործակցելիս՝ սովորողներն ավելի են խրախուսվում և ոգևորվում, ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից: Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից շատ կարևոր է,որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով ,որը պետք է հետաքրքիր արդիական լինի ծնողների համար: Դասղեկը կամ մանկավարժը պետք է ունենա հստակ նպատակ,ներկայացնի խնդիրները, որոնք որ պետք է լուծվեն համատեղ ուժերով՝ անչափ կարևորելով ծնողի դերը: Կարելի է օգտվել նաև համակարգչային ցուցադրություններից՝ հատկապես որպես ծնողական ժողովի վերջնական ամփոփում: Նշեմ մի քանի կանոններ,որոնք որ առաջարկում եմ կիրառել ծնողական ժողովների ժամանակ.

1. Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված ժամանակին:
2. Ծնողական ժողովի օրակարգը պետք է լինի հրատապ և տեղին:
3. Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ:
4. Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն լավ նախապատրաստված:
5. Ծնողական ժողովը պետք է սկսել լավ տրամադրությամբ և մեկ ու կես ժամից ավելի չպետք է տևի:
6. Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ, հետո նոր անցնել բուն խնդիրների քննարկմանը:

7. Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային։

Թեմատիկ ծնողական ժողովների նպատակները և խնդիրները.Այս ժողովներն անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով, որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին: Ներկայացնեմ կոնկրետ թեմատիկ ծնողական ժողովի օրինակ, որի թեման է <<Օգնություն հիմնական դպրոցի շրջանավարտին ավագ դպրոցում հոսքային ընտրություն կատարելու հարցում>>, որն անհրաժեշտ է անցկացնել 9-րդ դասարանցիների և ծնողների հետ համատեղ, տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի սկզբին: Այս ժողովի նպատակներն են. 1) Ծնողներին տեղեկացնել ավագ դպրոցում հոսքային ուսուցման և 9-րդ դասարանում նախնական մասնագիտական պատրաստվածության մասին:

2) Ծնողներին օգնել հաղորդակցվել իրենց երեխաների հետ՝ նախնական մասնագիտական կողմնորոշման խնդիրների շուրջ: 3) Ծնողներին տեղեկացնել և ծանոթացնել 9-րդ դասարանն ավարտելուց հետո իրենց երեխաների ուսումը շարունակելու վերաբերյալ:

<u>Նախապատրաստական աշխատանքներ</u>

Պատրաստել հարցաթերթիկներ և՛ ծնողների, և՛ սովորողների համար: Հարցաթերթիկում կարելի է ներառել սովորողներին ուղղված հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ գիտես հոսքային ուսուցման մասին:

□ Ունեմ որոշակի գիտելիքներ □ Ոչինչ չգիտեմ

2. 9-րդ դասարանն ավարտելիս:

□ Կշարունակես ուսումն ավագ դպրոցում □ Քոլեջում □ Դեռ չես որոշել

3. Որոշե՞լ ես թե ինչ կուզենայիր դառնալ:

□ որոշել եմ □ չեմ որոշել

4. Առաջին հերթին ու՞մ հետ կխորհրդակցեիր մասնագիտական կրթության ընտրության վերաբերյալ:

□ Դասղեկի կամ ուսուցչի □ Ծնողների □ Ընկերների □ Ինքդ կորոշեիր

Ծնողների համար նախատեսված հարցաթերթիկում կարելի է ներառել հետևյալ հարցերը

1. Տեղյա՞կ եք արդյոք,թե որ մասնագիտություններն առավել պահանջարկ ունեն:

2. Համարո՞ւմ եք արդյոք, որ ձեր երեխայի ապագա մասնագիտության ընտրությունն ամբողջովին ձեզանից է կախված:

3.Կարծու՞մ եք արդյոք , որ ձեր երեխան կարող է ինքնուրույն կատարել հոսքի ընտրություն:

4. Զրուցե՞լ եք արդյոք ձեր երեխայի հետ՝ նրա ապագա մասնագիտության ընտրության շուրջ:

5. Խոսե՞լ եք արդյոք ուսումը շարունակելու հնարավորությունների մասին և այլընտրանքների մասին:

Հարցաթերթիկների լրացումից հետո կատարվում է արդյունքների քննարկում: Ցանկալի է որ ծնողի ու իր երեխայի վերջնական տեսակետներն համընկնեն: Այս հարցում մեծ դեր է խաղում դասղեկի ուղղորդումը՝ հիմնվելով սովորողի առաջադիմության և ընդունակությունների վրա: Պետք է հաշվի առնվի նաև սովորողի նախասիրություններն ու հակումները: Հաջորդ քայլով անհարժեշտ է, որ դասղեկը հանգամանալից ներկայացնի ծնողներին ու սովորողներին գործող մի շարք կրթական հաստատություններին և դրանց ծրագրային առանձնահատկությունների հետ, տեղեկացնի ընդունելության կարգի մասին, իրազեկի մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումների մասին: Շատ կարևոր է, որ ծնողները ևս տեղյակ լինեն դպրոցական անցուդարձին, հետաքրքրվեն թե մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ինչպիսի՞ միջոցառումներ են անցկացվելու դպրոցում, երեխայի հետ քննարկեն ծագած խնդիրները,նրբանկատ ձևով չպարտադրված խորհուրդներ տան երեխաներին՝ կարևոր որոշումներ ընդունելիս իրենց օգնությունն առաջարկեն:

Պետք չէ անտեսել մասնագիտական կողմնորոշման հարցում նաև սովորողի հասակակիցների ազդեցությունը: Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ դեռահասներից շատերի համար ընկերների կարծիքն ավելի մեծ կշիռ ունի,քան ծնողներինը և ուսուցիչներինը: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հաշվի առնել սովորողի ընտրության հարցում ընկերների ազդեցության գործոնը և այն, թե որքանով կարող է այդ ազդեցությունը դրական լինել:Ամեն դեպքում պետք է նրբանկատ լինել,որպեսզի ակնհայտ բացասաբար չարտահայտվենք ընկերների մասին: Ժողովի արդյունքների ամփոփումից

հետո դասղեկը ևս մեկ անգամ կարևորում է քննարկվող խնդիրը,նշելով, որ այդ հարցերի շուրջ քննարկումները կշարունակվեն մինչև ուսումնական տարվա ավարտը:

ԳԼՈՒԽ 2: ՈՒՍՈՒՑԻՉ – ԾՆՈՂ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ Ժամանակակից զարգացած տեխնիկական միջոցները լայն ու բազմազան շփման հնարավորություններ են ընձեռնում: Շնորհիվ շուրջօրյա հասանելիության ապահովման, ծնողն ու ուսուցիչը օրվա յուրանքանչյուր վայրկյան հասնելի են միմյանց համար,որն էլ շատ կարևոր գործոն է և ունի մեծ նշանակություն ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա: Բազմազան ու բազմաֆունկցիոնալ են առցանց հարթակները, որտեղ ազատ կերպով կարող են շփվել ուսուցիչները, ծնողներն ու սովորողները: Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել ամեն ինչ: Նման շփումներն ու համագործակցություններն ունեն իրենց առավելությունները: Օրինակ՝ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան մինչև ծնողն ինքը կմոտենա, կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ ժողովի ժամանակ: Ուսուցիչը պետք է նմանատիպ խնդիրների դեպքում կապ հաստատի ծնողի հետ անմիջապես.լինի դա հեռախոսով, սոցիալական ցանցի միջոցով, թե էլեկտրոնային փոստով: Սովորողն հաջողության կհասնի միայն այն դեպքում,երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով իրեն կուղղորդեն և՛ ծնողը, և՛ ուսուցիչը միաժամանակ: Ճիշտ է, ժամանակակից ծնողներն ունեն որոշ գիտելիքներ e-mail, viber, watsapp,mesenger ծրագրերի, facebook,telegram,instagram,twitter և այլ սոցիալական ցանցերի մասին,սակայն առաջարկում եմ զրույցներ միջոցով անընդհատ թարմացնել ծնողների գիտելիքները ժամանակակից հաղորդակցման գործիքների, դրանց ընձեռնած հնարավորությունների ու արդյունավետության մասին: Ուսուցիչը պետք է լինի պոզիտիվ, առանց բացառությունների, պետք է յուրաքանչյուր սովորողի ծնողին՝ օգտվելով վերոհիշյալ ծրագրերից, ուղարկի տեղեկատվություն. օրինակ՝ ի՞նչ զարմանալի կամ գովելի բան է արել երեխան դասի ժամանակ: Ամենափոքրիկ բանն անգամ կարող է մեծ փոփոխություն մտցնել: Ամենափոքրիկ գովասանքն անգամ մեծ ոգևորություն և պատասխանատվություն է առաջացնում թե՛ ծնողի, և՛թե սովորողի մոտ: Այս կապն է, որ հանդիսանում է ուսուցման կազմակերպման բարելավման շարունակական ֆակտոր: Ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցումը խնայում է ուսուցչի և ծնողի համար և՛ ժամանակը, և՛ տարածությունը: Եթե ծնողը ժամանակի սղության

պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի, էլեկտրոնային նամակների տեսքով անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին: Խնայելով ժամանակը և տարածությունը, կարելի է ծնողական ժողով հրավիրելուց առաջ որևէ սոցիալական հարթակում քննարկել ծնողների հետ ժողովի թեման,նպատակները, դրա կարևորությունն ու հրատապությունը: Նման հարթակներում ուսուցիչը կարող է տեղադրել որևէ բաց դասի տեսագրություն, որի մեջ յուրաքանչյուր ծնող կարող է տեսնել, թե ինչպե՞ս է իր երեխան իրեն դրսևորում դասի ժամանակ: Կարելի է նաև այդ նույն դասի տեսանյութը քննարկել նույն հարթակում և կատարել եզրակացություններ: Կարելի է նաև ծնողների համաձայնությամբ դասի տեսագրությունը տեղադրել համացանցում: Այսօր երեխան գտնվելով տանը՝ իբրև ավելի ապահով տարածքում,կարող է կանգնել ավելի լուրջ խնդիրների առաջ՝ հայտնվելով <<համացանցային փողոցներում>>: Անընդհատ համացանցում և հեռուստատեսությամբ խոսվում է դեռահասներին ինքնասպանության հասցնող խաղերի, թրաֆիկինգի և այլ անառողջ երևույթների շուրջ, որոնք որ այսօր էլ շատ արդիական են: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը զարգացնի սեփական գիտելիքները և զուգահեռաբար դրանք փոխանցի սովորողների ծնողներին՝ կարևորելով դրանց լրջությունն ու վտանգավորությունը: Այսօր գոյություն ունեն այնպիսի ծրագրեր, որոնք սահմանափակում են սովորողի մուտքը համացանց: Կարևոր է, որ ծնողների հետ անընդհատ կազմակերպվեն քննարկումներ, հրավիրվեն մասնագետներ, ովքեր որ կկարողանան սպառիչ պատասան տալ ուսուցիչների և ծնողների մոտ առաջացած հարցերին: Նմանատիպ վտանգավոր դեպքերից կարելի է խուսափել միայն համատեղ գործելով և վերահսկողությունը խստացնելով թե՛ դպրոցում, թե՛ տանը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հետազոտական աշխատանքիս ամբողջ գաղափարն այն էր, որ ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում է մարդկանց կարեկցելու կարողությունը:

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում, նրանք են կրում երեխայի զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհներ խումբ և գործի դպրոցի հետ համատեղ:

Այսպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները, կատարեցի հետևյալ դիտարկումները.

- Համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա:
- Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր և բարոյական որոկների վրա: Այյստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:
- Հարկավոր է հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարակել կրթական հնարավոր խնդիրներ և սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված տարիքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:
- Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ

կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված և գիտակից անձնավորության ձևավորմանը:

Ծնողի և ուսուցչի փոխադարձ համագործակցություն նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն՝ սովորողի հաջողությունների և կրթության որակի բարձրացմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին ու ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն և ազդեն սովորողի առաջադիմության վրա: Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչը պետք է ամեն ինչ անի, որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան: Հետազոտական աշխատանքը սկսելուց առաջ, ինչպես ենթադրում էի, արդարացան իմ սպասելիքները:

Դրանք են.

- Սովորողի հաճախելիության ապահովում:
- Սովորողի լավ վարք:
- Սովորողի բարձր առաջադիմություն:
- Ծնողների վստահության բարձրացում ուսման և դպրոցի նկատմամբ :

Սովորողներն էլ իրենց հերթին մոտիվացվում են սովորել այնպիսի միջավայրում,որտեղ իրենց ծնողին

- ✓ Ընդունում,հարգում և գնահատում են:
- ✓ Համարում են գործընկերներ:
- ✓ Տալիս են մասնակցության հնարավորություն դպրոցական միջոցառումներին:
- ✓ Տալիս են հնարավորություն շփվելու դպրոցի անձնակազմի հետ:
- ✓ Տալիս են օգտակար տեղեկատվություն երեխաների, ուսումնական ծրագրերի և այլնի մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու.Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան <<Մանկավարժություն>>, <<Մանկավարժ>> 2005թ.

2. Մ.Մելքումյան <<Մակարենկոն ընտանեական դաստիարակության մասին>> Երևան,1985թ.

3. Ն.Ի.Բոլդիրև <<Դասղեկ>>, Երևան 1974թ.

4.<<Ուսուցում և դաստիարակություն>>, <<Տաթև գիտակրթական համալիր>> հանդես, Զանգակ 2012թ.

5. Մախչանյան Հ. <<Համագործակցային մանկավարժություն>>, Երևան 1981թշ

6. Ռուզաննա Մուրադյան <<Դասղեկ>> մեթոդական ձեռնարկ,Երևան 2007